# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Սեպտեմբերի 5-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Վերափոխման:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Մի՛ երկընչիր հօտ փոքրիկ» (Ղուկ. ԺԲ 32) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 41):

*Սեպտեմբերի 8-ին, չորեքշաբթի. - Գ. օր Խաչի պահոց: Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «ԶԱստուածածին զմիշտ կոյսն Մարիամ խանդերձ ամենայն սրբովք հիշելով զՏէր աղաչեսցուք» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց:

*Սեպտեմբերի 12-ին, կիրակի. - ԽԱՉՎԵՐԱՑ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սևան եպիսկոպոս Ղարիբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 12):

*Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի. - Տօն է Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արիստակես աբեղա Այվազյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Մի՛ լայք՝ զի չէ մեռեալ, այլ ննջէ» (Ղուկ. Ը 52) բնաբանով քարոզ խոսեց:

*Սեպտեմբերի 19-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ» (Մատթ. ԺԹ 6) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

*Սեպտեմբերի 26-ին, կիրակի. - Գ . կիր. զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը «Առ զխաչ քո եւ եկ զկնի իմ» (Մարկ. Ժ 21) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 153):

Հընթացս Ս. Պատարագի կատարվեց եպիսկոպոսական ձեռնադրություն (տե՛ս էջ 152):

*Նոյեմբերի 3-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 46):

Հավարտ Ս. Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն Գարեգին Ա Հայրապետի շիրմի առջև:

*Նոյեմբերի 10-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զամենայն ինչ զոր ունէր արկ, զոյի չափ զկեանս իւր» (Մարկ. ԺԲ 44) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

*Նոյեմբերի 17-ին, կիրակի. - Զ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ օծ իսկ զիս» (Ղուկ. Դ 18) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի Մոմիկ վարդապետ Սարգսյանի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

*Նոյեմբերի 24-ին, կիրակի. - Է. կիր. զկնի Ս. Խաչի: Գիւտ Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ 14) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 52):

*Նոյեմբերի 31-ին, կիրակի. - Ը. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ջոհրաբ աբեղա Կոստանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զի որ առնէ զկամս Աստուծոյ, նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր» (Մարկ. Գ 35) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 55):

Հավարտ Ս. Պատարագի Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ հոկտեմբերի 27-ի զոհերի հիշատակին: